ՀՖՖ ԽԱՂԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

2026 Թ. ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ I. ՊԱՏՎԻՐԱԿԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ____ 6

1. ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ 6

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 6

3. ՊԱՏՎԻՐԱԿԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՆ ԵՎ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ 7

4.ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ 8

5. ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԻ ՑԱՆԿԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ 8

6. ՊԱՏՎԻՐԱԿԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ....8

7. ՊԱՏՎԻՐԱԿԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 9

8. ՊԱՏՎԻՐԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ ԽԱՂԻՆ 12

9. ՊԱՏՎԻՐԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԵՐԸ 12

ԳԼՈՒԽ II. ՊԱՏՎԻՐԱԿԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ____ 13

10. ՄԱՐԶԱԴԱՇՏԵՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԵՎ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԻ ԲԱԺԻՆ 13

11. ՊԱՏՎԻՐԱԿԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ 13

ԳԼՈՒԽ III ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ____ 14

12. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՐԳԸ 14

13. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ 14

14. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ 15

ՀԱՎԵԼՎԱԾ 1 – ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ ____ 16

ՀԱՎԵԼՎԱԾ 2 - ՀՖՖ ԿՈՂՄԻՑ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ____ 17

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՖՖ	«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն
ՖԻՖԱ	Ֆուտբոլի միջազգային ասոցիացիաների ֆեդերացիա
ՈՒԵՖԱ	Ֆուտբոլի եվրոպական ասոցիացիաների միություն
ՖԱՄԽ (ԻՖԱԲ)	Ֆուտբոլի ասոցիացիաների միջազգային խորհուրդ
Մրցումներ	ՀՖՖ հովանու ներքո անցկացվող մրցաշարեր
ՀՊԼ	Հայաստանի Պրեմիեր լիգա
ԱԽ	Հայաստանի Առաջին խումբ
ՀԳԽ	Հայաստանի Գավաթի խաղարկություն
ՍԳԽ	Սուպերգավաթի խաղարկություն
ՀՖՖ ՄՀՊ բաժին	ՀՖՖ Մարզադաշտերի հավաստագրման և պատվիրակների բաժին, որը պատասխանատու է մարզադաշտերի ստուգման և պատվիրակների գործառույթների համար
Պատվիրակ	Խաղի կազմակերպման և անցկացման հարցերով ՀՖՖ-ի կողմից լիազորված պատասխանատու ներկայացուցիչ
ՀՖՖ պատվիրակների Վարքագծի կանոնագիր	Բոլոր պատվիրակների վարքագիծը կարգավորող հիմնարար փաստաթուղթ՝ բարոյական սկզբունքների, մասնագիտական չափորոշիչների և վարքագծի կանոնների վերաբերյալ
ՀՖՖ պատվիրակների Ուղեցույց	ՀՖՖ մարզադաշտերի հավաստարմագրման և պատվիրակների բաժնի կողմից մշակված գործնական աշխատանքային փաստաթուղթ՝ պատվիրակների համար իրենց պարտականությունների իրականացման գործում գործառնական ուղեցույցեր, ընթացակարգեր և լավագույն փորձ տրամադրելու համար:
Ակումբ	Մարզական առումով ՀՖՖ-ի, ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի կանոնակարգերին և սահմանված կիրառելի և վերաբերելի նորմերին ենթարկվող ֆուտբոլային մարզական ակումբ (թիմ), որը մասնակցում է կամ ցանկանում է մասնակցել ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող ֆուտբոլային մրցումներին
Ակումբի պաշտոնյա	Ակումբի աշխատակից՝ բացառությամբ ֆուտբոլիստների և թիմի անձնակազմի անդամների, ով ֆուտբոլային ակումբի հետ գտնվում է աշխատանքային հարաբերությունների մեջ և/կամ ներառված է ակումբի իրավական խմբի կառուցվածքում և/կամ գրանցված է ՀՖՖ Ֆուտբոլի կառավարման համակարգում՝ որպես ակումբի պաշտոնյա

Արտակարգ իրավիճակ/ Ֆորս-մաժոր	Ֆորս մաժոր՝ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք առաջացել են հանդիպման մասնակցի և կազմակերպչի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական և տեխնածին աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), համաճարակները, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները, գործադուլները, որոնք խոչընդոտում են ֆուտբոլային հանդիպման՝ պատշաճ և ըստ նախատեսվածի կազմակերպմանը և/կամ անցկացմանը
Դոպինգ ստուգում	Վիճակահանության արդյունքում ընտրված առաջնության մասնակից խաղացողներին և ակումբներին իրազեկում՝ վիճակահանությամբ ընտրված խաղացողների մասին, տվյալ խաղացողներից կենսաբանական նմուշների ստացում և դրանց հետագա հետազոտություն՝ ֆուտբոլիստների օրգանիզմում խթանիչ և/կամ այլ արգելված միջոցների առկայության ստուգման համար, ինչն ուղեկցվում է համապատասխան փաստաթղթերի ստորագրմամբ
Հիմնական հեռարձակող	Արտոնագրված ընկերություն, որը ՀՖՖ-ի հետ կնքված համապատասխան պայմանագրի հիման վրա իրավունք ունի կազմակերպել խաղերի հեռարձակումը, ինչի համար իրավունք ունի ներգրավել երրորդ կողմի, որը տվյալ պարագայում կօգտվի հիմնական հեռարձակողի լիազորություններից:
Հովանավոր (գործընկեր)	ՀՖՖ-ի հետ հովանավորչական (գործընկերական) պայմանագիր ստորագրած իրավաբանական անձ
Կարգապահական և էթիկայի կոմիտե	ՀՖՖ անկախ իրավական մարմին, որը պատասխանատու է կարգապահական կանոնների, էթիկական չափորոշիչների և կարգավորող պարտավորությունների խախտումները քննության առնելու և, որոշումներ կայացնելու և պատասխանատվության միջոցներ կիրառելու համար
Բողոքարկման կոմիտե	ՀՖՖ վերաքննիչ անկախ իրավականմարմին, որն իրավասու է վերանայել, պահպանել կամ փոփոխել Կարգապահական և էթիկայի կոմիտեի կողմից, ինչպես նաև ՀՖՖ ընտրական կոմիտեի կողմից կայացված որոշումները
Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին (ՄՌԿ)	ՀՖՖ կառուցվածքային ստորաբաժանում, որը պատասխանատու է կադրային վարչարարության, փաստաթղթավորման, անձնակազմի հավաքագրման, աշխատուժի կառավարման, մասնագիտական զարգացման, աշխատանքային արդյունավետության գնահատման և ՀՖՖ շրջանակներում աշխատանքային հարաբերությունների կառավարման համար

Մարզադաշտ	ՀՖՖ կողմից համապատասխանելիության հավաստագիր ստացած մարզական շինություն, որտեղ անցկացվում է ֆուտբոլային հանդիպումը
Մրցաշրջան	Ժամանակաշրջան, որը մեկնարկում է օրացուցային տվյալ տարվա հուլիսի 1-ին և ավարտվում հաջորդ տարվա հունիսի 20-ին
Մրցավար	ՀՖՖ կողմից նշանակված խաղի մրցավար
Տեսուչ	ՀՖՖ մրցավարական անձնակազմի գործողությունները գնահատող ներկայացուցիչ
Մրցավարի վիդեո օգնական համակարգ (ՄՎՕ/VAR համակարգ)	Տեխնոլոգիական պարագաներ և միջոցներ, որոնք թույլ են տալիս տեսագրել ուղիղ եթերի հեռարձակողի բոլոր տեսախցիկները՝ հետագայում հավաստագրված օպերատորի կողմից կրկնապատկերը ստանալու և մրցավարների որոշմանը օգնելու նպատակով: VAR-ը համակարգ է, որը օգնում է մրցավարին միայն «պարզ և ակնհայտ սխալի» կամ «լուրջ բաց թողնված միջադեպի» դեպքում:
Մրցումների բաժին	ՀՖՖ մրցումները կազմակերպող և անցկացնող ստորաբաժանում
ՊՖՄԱԿ	ՀՖՖ պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգ
Ֆուտբոլի կառավարման համակարգ (ՖԿՀ)	Էլեկտրոնային տեղեկատվական համակարգ, որը հնարավորություն է տալիս կատարել բոլոր գործառույթները, որոնք ընդգրկում են ֆուտբոլային ենթակառուցվածքների, ֆուտբոլային ակումբների, ֆուտբոլիստների, մրցումների կազմակերպման և անցկացման, նախախաղային և ետխաղային տվյալների կառավարումը
ՀՖՖ TASK	Առցանց հարթակ, որը նպաստում է ՀՖՖ ներքին հաղորդակցությանը և աշխատանքային հոսքի կառավարմանը, ներառյալ առաջադրանքների բաշխումը, գնման հարցումները, ծառայությունների համակարգումը, պաշարների բաշխումը և արձակուրդի դիմումները

ԳԼՈՒԽ Ի. ՊԱՏՎԻՐԱԿԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

1. ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

1.1 Սույն կանոնակարգն ընդունվել է ՀՖՖ գործադիր կոմիտեի կողմից՝ ՀՖՖ կանոնադրության, ինչպես նաև ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի կանոնակարգերի ու հրահանգների հիման վրա և դրանց համապատասխան:

1.2 Սույն կանոնակարգը Կանոնակարգը սահմանում է ՀՖՖ-ի կողմից նշանակվող խաղի պատվիրակների կարգավիճակը, դերը, լիազորությունները, իրավունքները, պարտականությունները, նշանակման կարգը և հաշվետվողականությունը:

1.3 Սույն կանոնակարգի նպատակն է ապահովել ՀՖՖ իրավասության ներքո անցկացվող պրոֆեսիոնալ ֆուտբոլի խաղերի ամբողջականությունը, անվտանգությունը, պատշաճ կազմակերպումը և վերահսկողությունը՝ համաձայն ՀՖՖ կանոնադրության, ՊՖՄԱԿ-ի, ՀՖՖ այլ կիրառելի կանոնակարգերի, ինչպես նաև ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի կանոնակարգերի ու հրահանգների:

1.4 Սույն կանոնակարգի դրույթները պարտադիր են ՀՖՖ պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումներում ներգրավված բոլոր խաղի պատվիրակների, ակումբների, պաշտոնատար անձանց, խաղի պաշտոնյաների և այլ շահագրգիռ կողմերի համար:

1.5 Սույն կանոնակարգով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՖՖ կանոնադրությամբ, ՊՖՄԱԿ-ով, ՀՖՖ այլ կիրառելի կանոնակարգերով, ինչպես նաև ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի համապատասխան նորմատիվ ակտերով:

1.6 ՀՖՖ պատվիրակների ուղեցույց» ձեռնարկը կրում է բացառապես օժանդակ-գործնական բնույթ. ուղեցույցի և սույն կանոնակարգի դրույթների միջև անհամապատասխանության դեպքում գերակայում է սույն կանոնակարգը:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2.1 Պատվիրակը ֆիզիկական անձ է, որը նշանակվել է ՀՖՖ ղեկավարության կողմից՝ սույն կանոնակարգով սահմանված կարգով, և համապատասխանում է հետևյալ պահանջներին.

ա) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի կամ Հայաստանի Հանրապետությունում մշտական կամ ժամանակավոր կացության իրավունք և աշխատանքի թույլտվություն ունեցող անձ,

բ) պաշտոնապես մասնակցել է գործող ՀՖՖ պատվիրակների գործունեությանը,

գ) հաջողությամբ հանձնել է հատուկ գրավոր քննությունը,

դ) համապատասխանում է սույն կանոնակարգի այլ պահանջներին:

2.2 Խաղի համար նշանակված պատվիրակը համարվում է խաղի պաշտոնյա: Պատվիրակը խաղի համար նշանակված ՀՖՖ խաղի պաշտոնյաների շարքում ավագն է և իրավասու է խաղի կազմակերպմանն առնչվող բոլոր հարցերով:

2.3 Պատվիրակը նշանակվում է ՀՊԼ-ի, ԱԽ-ի, ՀԳԽ-ի և ՍԳԽ-ի բոլոր հանդիպումներին և իրականացնում է խաղի կազմակերպման և անցկացման առաջնային ընդհանուր վերահսկողությունը:

2.4 Պատվիրակների նշանակումը չի կարող լինել ավելի քան մեկ մարզական մրցաշրջան կամ ընթացիկ մարզական մրցաշրջան:

2.5 Ակումբների կամ այլ անձանց և/կամ կազմակերպությունների պահանջով կամ խնդրանքով խաղերին պատվիրակի նշանակում կամ փոխարինում չի իրականացվում:

2.6 Պատվիրակն ունի սույն կանոնակարգով, ՊՖՄԱԿ-ով, ՀՖՖ այլ կիրառելի կանոնակարգերով ու կարգավորող փաստաթղթերով, ինչպես նաև իր հետ կնքված ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով նախատեսված բոլոր իրավունքներն ու պարտականությունները:

2.7 Պատվիրակը պատասխանատու է խաղի կազմակերպման ապահովման, ՊՖՄԱԿ-ի, ՀՖՖ այլ կիրառելի կանոնակարգերի և կարգավորող փաստաթղթերի դրույթների պահպանման համար, խաղից առաջ, խաղի ընթացքում և դրանից հետո վերահսկում է մարզադաշտում և դրանից դուրս հասարակական կարգի և հասարակական անվտանգության կազմակերպումը:

2.8 Պատվիրակը մշտապես գործում է՝ համաձայն Վարքագծի կանոնագրի դրույթների (Հավելված 1):

2.9 Պատվիրակը կանոնավոր կապ է պահպանում ՄՀՊ բաժնի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ Մրցումների բաժնի և ՀՖՖ այլ ստորաբաժանումների հետ:

2.10 Պատվիրակը կրում է անձնական պատասխանատվություն իր ծառայողական պարտականությունների ոչ պատշաճ կատարման համար, այդ թվում՝ հաշվետվությունները թերի կամ ոչ ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև ոչ հավաստի տեղեկություն տրամադրելու համար՝ ՀՖՖ կանոնակարգերի, պատվիրակի և ՀՖՖ-ի միջև կնքված պայմանագրի, ՀՖՖ պատվիրակների ուղեցույցի և Վարքագծի կանոնագրի դրույթներին համապատասխան:

3. ՊԱՏՎԻՐԱԿԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՆ ԵՎ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

3.1 Պատվիրակի թեկնածուն պետք է լինի 23-ից 65 տարեկան լիովին գործունակ անձ, ով պատրաստ է իրականացնել պատվիրակի գործառույթները՝ համաձայն սույն կանոնակարգով սահմանված կարգի, և ներկայացրել է սույն հոդվածի 3.6 կետում թվարկված անհրաժեշտ փաստաթղթերն ու տեղեկատվությունը:

3.2 Եթե պատվիրակի 65 ամյակը լրանում է այն մարզական մրցաշրջանի ընթացքում, որի համար նա հաստատվել է որպես պատվիրակ, ապա վերջինս իրավասու է շարունակել իր գործառույթների իրականացումը մինչև տվյալ մարզական մրցաշրջանի ավարտը՝առանց լիազորությունների երկարաձգման անհրաժեշտության:

3.3 ՀՖՖ նախագահը՝ ՄՀՊ բաժնի ներկայացմամբ, կարող է թույլատրել 65 տարեկանից բարձր անձին պաշտոնավարել որպես պատվիրակ՝ քննարկելով յուրաքանչյուր դեպքն առանձին:

3.4 Առաջին անգամ որպես պատվիրակի թեկնածու ներկայացվող անձի տարիքը պաշտոնավարման մրցաշրջանի սկզբում չպետք է գերազանցի 55 տարեկանը:

3.5 Պատվիրակի թեկնածուն կարող է առաջարկվել ՄՌԿ բաժնի, ՄՀՊ բաժնի և/կամ ՀՖՖ ղեկավարության կողմից, ինչպես նաև ինքնաառաջադրման տեսքով:

3.6 Սույն հոդված 3.5 կետում նշված ձևերից ցանկացածի դեպքում պատվիրակի թեկնածուն պետք է ՄՌԿ բաժնին տրամադրի իր ռեզյումեն, իսկ հաստատման դեպքում նաև.

ա) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ մշտական կամ ժամանակավոր կացության իրավունքը հավաստող փաստաթղթի պատճենը,

բ) գրանցման հասցեն,

գ) ֆիզիկական անձի բանկային հաշվեհամարի տվյալները,

դ) կոնտակտային տվյալները՝ հեռախոսահամար և էլեկտրոնային հասցե delegate.name.surname@gmail ձևաչափով,

ե) այլ փաստաթղթեր կամ տեղեկատվություն, որոնք կարող են պահանջվել ՄՌ բաժնի կողմից:

3.7 Սույն հոդվածի 3.6 կետում նշված տեղեկատվության փոփոխության դեպքում պատվիրակի թեկնածուն (իսկ հետագայում՝ նաև պատվիրակը) պարտավոր է այդ մասին տեղեկացնել ՄՌԿ և ՄՀՊ բաժիններին 3 (երեք) օրացուցային օրվա ընթացքում և տրամադրել համապատասխան փաստաթղթեր:

3.8 Պատվիրակը պարտավոր է միշտ ցուցաբերել լիակատար անաչառություն և չեզոքություն: Վերջինս պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին՝

- մշտապես գործել պրոֆեսիոնալ կերպով,
- խրախուսել հաղորդակցությունը,
- հաշվի առնել այլ անձանց կարծիքները,
- ցուցաբերել առաջնորդություն,
- անհրաժեշտության դեպքում կայացնել որոշումներ:

4.ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

4.1 Քննությունը անցկացվում է պատվիրակի թեկնածուի պատրաստվածության մակարդակը որոշելու համար:

4.2 Քննությունն անցկացվում է գրավոր թեստի տեսքով՝ մեկ սենյակում, որտեղ սկզբի և ավարտի ժամերը նույնն են պատվիրակների բոլոր թեկնածուների համար:

4.3 Քննության հարցաշարը կազմվում է ՄՀՊ բաժնի կողմից:

4.4 Հարցաշարի պատասխանները գնահատվում են 1 կամ 0,5 կամ 0 բալով:

4.5 Քննությունը համարվում է հաջողությամբ հանձնված, եթե պատվիրակի թեկնածուն ճիշտ է պատասխանել հարցերի առնվազն 70%-ին:

5. ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԻ ՑԱՆԿԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

5.1 Յուրաքանչյուր մրցաշրջանից 1 (մեկ) ամիս առաջ ՄՀՊ բաժինը ՀՖՖ նախագահի հաստատմանն է ներկայացնում պատվիրակների առաջարկվող ցանկը՝ ՀՖՖ TASK-ի միջոցով:

5.2 ՀՖՖ նախագահի հաստատումից հետո ՄՌԿ բաժնի միջոցով նրանց հետ կնքվում է ծառայության վճարովի մատուցման պայմանագիր 1 (մեկ) մրցաշրջան ժամկետով:

5.3 Պատվիրակներին հանձնվում են անվանական քարտեր (բեյջեր) լուսանկարով:

5.4 ՀՖՖ-ն ի դեմս իր ՄՀՊ բաժնի իրավունք ունի ցանկացած պահի կասեցնել կամ դադարեցնել որոշակի պատվիրակների գործունեությունը: Այդ դեպքում պատվիրակի պաշտոնավարումը կկասեցվի, իսկ անհրաժեշտության դեպքում վերջինիս հետ պայմանագիրը կխզվի:

6. ՊԱՏՎԻՐԱԿԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1 Խաղում իր գործառույթներն իրականացնելիս՝ պատվիրակը անմիջականորեն պատասխանատու է.

- նշանակումը ՀՖՖ ՖԿՀ-ում 48 ժամվա ընթացքում հաստատման համար: Հակառակ դեպքում իր նշանակումը չեղարկվում է 48 ժամ անց: Բացառություն են կազմում հրատապ նշանակումները, որոնց դեպքում հաստատումն անհրաժեշտ է իրականացնել առավելագույնը 1 (մեկ) ժամվա ընթացքում:

- իր նշանակման մասին խաղի մեկնարկից առնվազն 72 ժամ առաջ խաղի մասնակից ակումբներին էլեկտրոնային փոստով տեղեկացնելու համար՝ տրամադրելով նրանց անհրաժեշտ տեղեկատվություն և խաղի նախնական հետհաշվարկը:
- խաղի մեկնարկից առնվազն 24 ժամ առաջ մասնակից թիմերի հետ հեռախոսակապի միջոցով նախախաղային խնդիրների և պատրաստության քննարկման համար
- ՊՖՄԱԿ-ի և ՀՖՖ այլ կիրառելի կանոնակարգերի և կարգավորող փաստաթղթերի համաձայն խաղի կազմակերպման վերահսկման համար,
- խաղի մեկնարկից 120 րոպե առաջ՝ կազմակերպչական խորհրդակցության արձանագրությունում և խաղից հետո՝ ՀՖՖ պատվիրակի հաշվետվությունում և Արդար Խաղի հաշվարկում արտացոլված տեղեկատվության ճշգրտության, անաչառության, ամբողջականության և ժամանակին ներկայացման ապահովման համար,
- ՊՖՄԱԿ-ով և ՀՖՖ այլ կիրառելի կանոնակարգերով և կարգավորող փաստաթղթերով նախատեսված տեղեկատվության ժամանակին տրամադրման ապահովման համար,
- նախախաղային կազմակերպչական խորհրդակցության ժամանակին և պատշաճ անցկացման ապահովման համար,
- խաղի կազմակերպման և անցկացման վերաբերյալ սեփական որոշումների և հրահանգների հիմնավորման ապահովման համար:

6.2 Սույն կանոնակարգով, ՊՖՄԱԿ-ով, ՀՖՖ այլ կիրառելի կանոնակարգերով և կարգավորող փաստաթղթով և ՀՖՖ-ի հետ կնքված պայմանագրով նախատեսված իր պարտականությունների ոչ պատշաճ կատարման համար պատվիրակը պատասխանատվություն է կրում սույն կանոնակարգի Հոդված 13-ում և Հավելված 2-ում սահմանված կարգով:

7. ՊԱՏՎԻՐԱԿԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1 Պատվիրակի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են սույն կանոնակարգով, ՊՖՄԱԿ-ով, ՀՖՖ այլ կիրառելի կանոնակարգերով և կարգավորող փաստաթղթերով, ՀՖՖ պատվիրակների Ուղեցույցով, ՀՖՖ հրահանգներով և ՀՖՖ-ի հետ կնքված իր պայմանագրով:

7.2 Պատվիրակն իրավունք ունի.

- հրաժարվել այն խաղից, որի համար նշանակվել է ոչ ուշ, քան խաղի մեկնարկից 5 (հինգ) օր առաջ, բացառությամբ ֆորս-մաժորային դեպքերի,
- ՖԿՀ-ի միջոցով տեղեկացնել ՄՀՊ բաժնին այն ամսաթվերի (ժամանակահատվածների) մասին, որոնց ընթացքում նա հասանելի չէ պատվիրակի գործառույթներն իրականացնելու համար,
- խաղից առաջ, ընթացքում և հետո գտնվել խաղի անցկացման մարզադաշտի ցանկացած հատվածում,
- իր պարտականությունների և իրավասության շրջանակներում հրահանգներ տալ մրցավարների տեսուչին, մրցավարական անձնակազմին, խաղի մասնակից ակումբների և մարզադաշտի անձնակազմերին, խաղին մասնակցող կազմակերպությունների աշխատակիցներին, խորհրդակցել ոստիկանության և շտապ օգնության ներկայացուցիչների հետ՝ կապված խաղի անցկացման ապահովման հետ՝ համաձայն ՊՖՄԱԿ-ի և ՀՖՖ այլ կիրառելի կանոնակարգերի և կարգավորող փաստաթղթերի դրույթների,
- խորհրդակցելով մրցավարի և ՀՖՖ-ի հետ՝ մինչև խաղի նշանակված մեկնարկի ժամը հետաձգել խաղասկիզբը, անցկացնել կամ չանցկացնել խաղը անվտանգության և ապահովության ոչ պատշաճ մակարդակի, ներառյալ՝ ոստիկանության, կարգադրիչների և/կամ մասնավոր անվտանգության ծառայության աշխատակիցների բացակայության և/կամ անբավարար քանակի պատճառով, եթե դա կարող է վտանգ ներկայացնել խաղի մասնակիցների, մրցավարների և/կամ հանդիսատեսների առողջությանն ու կյանքին,

- արգելել Մրցումների բաժնի կողմից հաստատված միջոցառման անցկացումը, եթե այն հակասում է վերջինիս կողմից հաստատված միջոցառման բովանդակությանը,
- ՀՖՖ-ի հետ խորհրդակցելով՝ չեղարկել խաղը՝ եղանակային, անվտանգության ապահովման և այլ խնդիրների պարագայում,
- օգտվել հյուրընկալող թիմի խաղերի կազմակերպչի բազմակողմանի օժանդակությունից, ներառյալ՝ մարզադաշտի ռադիոհանգույցի կիրառումը, խաղի հետ կապված ցանկացած տեղեկատվության և հրահանգների փոխանցման համար,
- իր պարտականությունների իրականացման ընթացքում օգտագործել լուսա- և տեսաձայնագրման ցանկացած միջոց,
- արտացոլել իր հետխաղային հաշվետվության, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև լրացուցիչ հաշվետվության մեջ, խաղի անցկացմանը վերաբերող ցանկացած տեղեկատվություն, այդ թվում՝ ՄՀՊ բաժնի հրահանգներին համապատասխան:

7.3 ՀՖՖ Պատվիրակը պարտավոր է.

- հաստատել իր նշանակումը ՀՖՖ ՖԿՀ-ի միջոցով Հոդված 6-ի 6.1 կետում նշված ժամկետում,
- տեղեկացնել մասնակից թիմերին իր նշանակման մասին խաղից առնվազն 72 ժամ առաջ էլեկտրոնային հաղորդագրության միջոցով,
- ժամանել խաղի անցկացման մարզադաշտ խաղի մեկնարկից առնվազն 150 րոպե առաջ,
- մարզադաշտ ժամանման պահից կրել պատվիրակի անվանական քարտը (բեյջը),
- հատուկ ուշադրություն դարձնել պատվիրակի համազգեստի ճիշտ և լիարժեք կրմանը՝ ապահովելով դրա մաքրությունն ու համապատասխանելիությունը,ժամանելով մարզադաշտ՝ ստուգել կառույցի պատրաստվածությունը խաղին և քննարկել հնարավոր խնդիրները հյուրընկալող թիմի և/կամ մարզադաշտի ներկայացուցիչների հետ,
- վերահսկել, որպեսզի ստուգման ընթացքում հայտնաբերված թերությունները շտկվեն մինչև խաղասկիզբը,
- անհրաժեշտության դեպքում արձանագրել օդի ջերմաստիճանը,
- նախախաղային կազմակերպչական խորհրդակցության արձանագրության մեջ ներառել խաղի կազմակերպման ու անցկացման հետ կապված հարցերը,
- պահանջել նախախաղային կազմակերպչական խորհրդակցության մասնակիցներից հաստատել իրենց ներկայությունը մասնակիցների աղյուսակում,
- նախախաղային կազմակերպչական խորհրդակցության մասնակիցներին տեղեկացնել այդ խաղի համար ՊՖՄԱԿ-ի և ՀՖՖ այլ կիրառելի կանոնակարգերի և կարգավորող փաստաթղթերի դրույթների պահանջների մասին,
- միջոցներ ձեռնարկել խաղի կազմակերպման և անցկացման հետ կապված հարցերը լուծելու համար (ներառյալ իրավապահ մարմինների գործողությունները՝ անվտանգության և հասարակական կարգի ապահովման, ինչպես նաև անվտանգության և բժշկական ծառայությունների ապահովման համար),
- աջակցել հիմնական հեռարձակողի և ՄՏՕ աշխատակիցներին խաղի հեռարձակումը կազմակերպելու հարցերում,
- հետևել երկրպագուների վարքագծին՝ հետխաղային հաշվետվություններում նշելով ցանկացած անօրինական գործողություն (խուլիգանություն, ռասիզմ և այլն), ինչպես նաև մասնակից թիմերի վարքագծին, և ապահովել թիմերի մարզչական անձնակազմի և ակումբների պաշտոնյաների կողմից ՊՖՄԱԿ-ի և ՀՖՖ այլ կիրառելի կանոնակարգերի և կարգավորող փաստաթղթերի պահանջների ապահովումը,
- արձանագրել երրորդ կողմերի միջամտության պատճառով հանդիպումը կասեցնելու փորձերը, ինչպես նաև խաղից առաջ, ընթացքում կամ դրանից հետո տեղի ունեցած միջադեպերը և/կամ բախումները, որոնք ենթադրում են ոստիկանության և/կամ անվտանգության աշխատակիցների միջամտություն, անհապաղ տեղեկացնել դրանց մասին ՄՀՊ և Մրցումների բաժիններին, ինչպես նաև մանրամասն նշել այդ մասին հետխաղային հաշվետվությունում,

- վերահսկել հյուրընկալող ակումբի և մարզադաշտի կողմից գովազդային վահանակների տեղադրման գծագրի պահպանումը, ակումբների կողմից ՊՖՄԱԿ-ով և ՀՖՖ այլ կիրառելի կանոնակարգերով և կարգավորող փաստաթղթերով նախատեսված առևտրային պարտավորությունների կատարումը, ինչպես նաև ՀՖՖ-ի և հովանավորների (գործընկերների) միջև կնքված համաձայնագրերը,
- ՊՖՄԱԿ-ի և ՀՖՖ այլ կիրառելի կանոնակարգերի և պահանջների բոլոր խախտումները ներառել պատվիրակի զեկույցում: Խաղից հետո թիմերի ներկայացուցիչներին հակիրճ տեղեկացնել հայտնաբերված բոլոր խախտումների մասին,
- գնահատել թիմերի, նրանց պաշտոնյաների և երկրպագուների վարքագիծը՝ «Արդար խաղի» համակարգի հաշվարկում:
- խաղի ավարտից առավելագույնը 2 (երկու) ժամվա ընթացքում հաղորդել խաղից առաջ, ընթացքում կամ հետո տեղի ունեցած միջադեպերի մասին, կազմել խաղի հաշվետվությունը և Արդար Խաղի հաշվարկը ՖԿՀ-ում, իսկ կիրառելի դեպքերում տեղեկացնել լրացուցիչ հաշվետվության կազմելու անհրաժեշտության մասին ՄՀՊ բաժնին,
- տեղեկացնել ՄՀՊ բաժնին՝ առցանց հաշվետվությունն ուղարկելուց հետո հայտնաբերած և/կամ ի հայտ եկած խախտումների և/կամ միջադեպերի մասին,
- լքել մարզադաշտը միայն հանդիսատեսների, թիմերից առնվազն մեկի և մրցավարական անձնակազմի հեռացումից հետո: Թույլատրվում է հեռանալ մարզադաշտից մրցավարական անձնակազմի հետ, բայց ոչ մինչև հանդիսատեսի և թիմերից առնվազն մեկի հեռացումը: Դոպինգ-ստուգման դեպքում հեռանալ հակադոպինգային գործակալության բժշկի թույլտվությամբ:
- պահպանել պատվիրակի և ՀՖՖ-ի միջև կնքված պայմանագրի պահանջները և դրույթները,
- պահպանել բարոյական և էթիկական չափանիշները, զերծ մնալ իրենց պաշտոնական դիրքի չարաշահումից և պատվիրակի հաշվետվությունում նշել այդ չափանիշների ցանկացած խախտում ակումբի աշխատակիցների, ինչպես նաև խաղին մասնակցող այլ կազմակերպությունների աշխատակիցների կողմից:
- պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը և պատվիրակի գործառույթներն իրականացնելիս՝ պահանջել դրա կատարումը, պահպանել սույն Կանոնակարգի, ՊՖՄԱԿ-ի, ՀՖՖ այլ կիրառելի կանոնակարգերի և կարգավորող փաստաթղթերի պահանջները և պահպանել ՀՖՖ-ի գործարար հեղինակությունը:

7.4 Պատվիրակը չպետք է տա հրահանգներ և/կամ համակարգի որևէ անձի գործողությունները, որոնք ուղղված են ՊՖՄԱԿ-ի և/կամ ՀՖՖ այլ կիրառելի կանոնակարգերի և կարգավորող փաստաթղթերի դրույթների խախտմանը:

7.5 Պատվիրակը չպետք է չարաշահի իրեն տրված իրավունքները և լիազորությունները, սահմանի իրավունքներ, կայացնի որոշումներ կամ տա հրահանգներ, որոնք նախատեսված չեն այս կանոնակարգով, ՊՖՄԱԿ-ով և ՀՖՖ այլ կիրառելի կանոնակարգերի և կարգավորող փաստաթղթերով:

7.6 Պատվիրակը չպետք է օգտագործի որևէ տեղեկատվություն, որը նրան հայտնի է դառնում խաղի ընթացքում իր պարտականությունները կատարելիս, եթե այդ տեղեկատվությունը չի վերաբերում իր գործունեությանը:

7.7 Պատվիրակը չպետք է տա հարցազրույցներ, այդ թվում՝ ԶԼՄ-ներին, տա մեկնաբանություններ կամ տարածի տեղեկատվություն խաղի ընթացքում իր պարտականությունների իրականացման վերաբերյալ:

7.8 Պատվիրակը չպետք է ծխի մարզադաշտում իր պարտականություններն իրականացնելիս:

7.9 Պատվիրակի վարձատրությունն իրականացվում է ըստ կնքված պայմանագրի: Նրա պարտականությունների իրականացման համար վարձատրության չափը որոշվում է յուրաքանչյուր մրցաշրջանից առաջ ՀՖՖ նախագահի և ՄՀՊ բաժնի քննարկման արդյունքում ոչ ուշ, քան մինչև իր նոր պայմանագրի կնքումը:

7.10 Պատվիրակի վճարումը բաղկացած է.

ա) հիմնական վարձատրություն յուրաքանչյուր խաղի համար՝ գոտիական սկզբունքով (հարկվող),

բ) ճանապարհածախս (չհարկվող),

գ) օրապահիկ՝ հեռավոր գոտիների համար (հարկվող):

8. ՊԱՏՎԻՐԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ ԽԱՂԻՆ

8.1 Պատվիրակը խաղի է նշանակվում ՄՀՊ բաժնի կողմից՝ սույն կանոնակարգի Գլուխ II-ում սահմանված կարգով:

9. ՊԱՏՎԻՐԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԵՐԸ

9.1 Պատվիրակի նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական պատասխանատվության միջոցներ ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի կողմից: Ինչպես նաև կիրառվում են ՄՀՊ և ՄՌԿ ստորաբաժանումների կողմից՝ սույն կանոնակարգի Հոդված 13-ով և Հավելված II-ով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ II. ՊԱՏՎԻՐԱԿԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ

10. ՄԱՐԶԱԴԱՇՏԵՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԵՎ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԻ ԲԱԺԻՆ

10.1 Պատվիրակները նշանակվում են խաղերի ՄՀՊ բաժնի կողմից՝ ըստ ՖԿՀ-ում պատվիրակի հասանելիության օրացույցի:

10.2 Պատվիրակների խաղերի նշանակումներն իրականացվում են խաղի մեկնարկից առնվազն 10 (տաս) օր առաջ, բացառությամբ ֆորսմաժորային նշանակումների:

10.3 Պատվիրակը չի կարող նշանակվել խաղի, եթե վերջինս աշխատանքային հարաբերություններ ունի կամ ունեցել է վերջին 3 (երեք) տարիների ընթացքում մասնակից թիմերից մեկի հետ:

11. ՊԱՏՎԻՐԱԿԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ

11.1 Եթե պատվիրակը հաստատվում է նախատեսված խաղի համար, վերջինս չի կարող հրաժարվել իր նշանակումից առանց հարգելի կամ ֆորսմաժորային պատճառի: Եթե պատվիրակը հրաժարվում է պաշտոնավարել խաղը սահմանված վերջնաժամկետից հետո առանց հարգելի պատճառի, ապա վերջինիս նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական տույժեր:

11.2 Պատվիրակի նշանակումները դադարեցվում են հետևյալ դեպքերում.

ա) պատվիրակի գրավոր դիմում՝ խաղերի համար իր նշանակումները դադարեցնելու մասին,

բ) պատվիրակի նկատմամբ ԿԷԿ-ի կողմից կիրառված կարգապահական տույժի դեպքում,

գ) պատվիրակի նկատմամբ ՄՀՊ եվ ՄՌԿ ստորաբաժանումների կողմից կիրառված կարգապահական տույժի դեպքում,

դ) բժշկական հակացուցումների դեպքում,

ե) պատվիրակի պարտականությունների իրականացման վրա ազդող այլ հանգամանքների դեպքում,

զ) ՀՖՖ ղեկավարության որոշմամբ:

11.3 Պատվիրակի նշանակումները վերականգնելու որոշումը կայացվում է ՄՀՊ և ՄՌԿ ստորաբաբաժանումների քննարկման և ՀՖՖ նախագահի հաստատման արդյունքում:

ԳԼՈՒԽ III ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

12. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՐԳԸ

12.1 Պատվիրակի նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցները կիրառվում են ՀՖՖ ՄՀՊ ստորաբաժանման կողմից՝ ՄՌԿ ստորաբաժանման հետ համատեղ քննարկման արդյունքում և (կամ) ակումբի ներկայացման հիման վրա:

12.2 ՄՀՊ և ՄՌԿ ստորաբաժանումները քննում են պատվիրակի կողմից իր պարտականությունների կատարումը՝ սույն կանոնակարգի, ՊՖՄԱԿ-ի և ՀՖՖ այլ կիրառելի կանոնակարգերի ու կարգավորող փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Քննությունն իրականացվում է հետևյալ նյութերի վերլուծության հիման վրա.

ա) պատվիրակի զեկույցի,

բ) նախախաղային խորհրդակցության արձանագրության,

գ) խաղի մասնակիցների և (կամ) հիմնական հեռարձակողի ներկայացուցչի ներկայացրած լուսանկարների կամ տեսանյութերի,

դ) ակումբի գրավոր դիմումի,

ե) պատվիրակի գրավոր լրացուցիչ բացատրության:

12.3 ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեն իրավասու է սեփական նախաձեռնությամբ հարուցել կարգապահական վարույթ և պատվիրակի նկատմամբ կիրառել կարգապահական պատասխանատվության միջոցներ՝ ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգով սահմանված կարգով՝ անկախ սույն գլխով նախատեսված ընթացակարգից:

12.4 ՄՀՊ ստորաբաժանման՝ կարգապահական պատասխանատվության միջոց կիրառելու մասին որոշումը ստորագրվելուց հետո՝ 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում, էլեկտրոնային փոստով ուղարկվում է պատվիրակին:

13. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

13.1 Խախտման փաստը հաստատվելու դեպքում ՄՀՊ ստորաբաժանումը՝ ՄՌԿ ստորաբաժանման հետ համատեղ քննարկման արդյունքում, պատվիրակի նկատմամբ կարող է կիրառել կարգապահական պատասխանատվության հետևյալ միջոցներից որևէ մեկը.

- *նկատողություն*՝ պատվիրակի նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոց՝ երկու անգամից պակաս կատարված աննշան և ոչ համակարգված խախտման դեպքում,
- *նախազգուշացում*՝ պատվիրակի նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոց՝ աննշան և համակարգված խախտման դեպքում (երկու անգամից ավելի),
- *ժամանակավոր* ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում *1 (մեկ) տուրից և ավելին ժամկետով*՝ պատվիրակի նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոց՝ էական խախտման, ինչպես նաև սույն կանոնակարգի, ՊՖՄԱԿ-ի և ՀՖՖ այլ կիրառելի կանոնակարգերի և կարգավորող փաստաթղթերի դրույթների կոպիտ խախտման դեպքում,
- *հեռացում*՝ պատվիրակի նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոց՝ կրկնվող էական խախտման, ինչպես նաև սույն կանոնակարգի, ՊՖՄԱԿ-ի և ՀՖՖ այլ կիրառելի կանոնակարգերի և կարգավորող փաստաթղթերի դրույթների կրկնվող կոպիտ խախտման դեպքում:

13.2 Պատվիրակի նկատմամբ կիրառվող և որոշակի ժամանակահատված նախատեսող պատասխանատվության միջոցները չեն ներառում ՀՖՖ-ի կողմից հայտարարված դադարները, ինչպիսիք են ազգային հավաքականի

նախապատրաստական և խաղային օրերը, առաջնությունների ընդմիջումից կամ ավարտից հետո ընկած ժամանակահատվածները:

13.3 Կարգապահական պատասխանատվության միջոցները կիրառվում են պատվիրակի նկատմամբ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2-ի:

14. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

14.1 Պատվիրակի և ՀՖՖ-ի միջև ծագող քաղաքացիաիրավական հարաբերությունների նկատմամբ, որքանով դրանք կարգավորված չեն սույն կանոնակարգով և պատվիրակի հետ կնքված պայմանագրով, կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի դրույթները:

14.2 Սույն կանոնակարգով, պատվիրակի հետ կնքված պայմանագրով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով չկարգավորված դեպքերում պատվիրակի իրավունքներն ու պարտականությունները որոշվում են ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ-ի սահմանած նորմերի ընդհանուր սկզբունքներից և իմաստից ելնելով՝ բարեխղճության, ողջամտության և արդարության պահանջներին համապատասխան:

14.3 Այն դեպքում, երբ պատվիրակը կատարել է սույն կանոնակարգով ուղղակիորեն չնախատեսված արարք, որն իր էությամբ և հետևանքներով համարժեք է սույն կանոնակարգով նախատեսված կարգապահական խախտման, ՄՀՊ և ՄՌԿ ստորաբաժանումները ծառայողական քննություն անցկացնելուց հետո իրավասու են պատվիրակի նկատմամբ կիրառել համարժեք խախտման համար նախատեսված պատասխանատվության միջոցներից մեկը՝ ոչ ավելի խիստ, քան նախատեսված է այդ խախտման համար:

14.4 Սույն կանոնակարգը հաստատվել է ՀՖՖ գործադիր կոմիտեի կողմից 2026 թ-ի հոկտեմբերի 30-ին և ուժի մեջ է մտնում պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների 2026/2027 թթ.-երի մրցաշրջանից:

14.5 Սույն կանոնակարգի և ՀՖՖ կանոնադրության կամ ՊՖՄԱԿ-ի դրույթների միջև հակասության դեպքում գերակայում են համապատասխանաբար ՀՖՖ կանոնադրության կամ ՊՖՄԱԿ-ի դրույթները:

ՀԱՎԵԼՎԱԾ 1 – ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ

- ✓ Պատվիրակները պետք է իրենց դրսևորեն արհեստավարժ կերպով՝ գիտակցելով, որ իրենց գործելաոճն ու արտահայտությունները կարող են դրական կամ բացասական ազդեցություն ունենալ ոչ միայն իրենց, այլ առաջին հերթին՝ ՀՖՖ-ի պատկերի վրա, ինչպես շահագրգիռ կողմերի, այնպես էլ ԶԼՄ-ների և հայկական ֆուտբոլային ընտանիքի լայն շերտերում:
- ✓ Սոցիալական ցանցերն օգտագործելիս պատվիրակներին անհրաժեշտ է դրսևորել պատասխանատվություն և գիտակցել, որ իրենք գտնվում են ՀՖՖ-ի կողմից նշանակված գործուղման մեջ: Մասնավորապես, արգելվում է.
  - տեղադրել մեկնաբանություններ թիմերի, խաղացողների և/կամ ՀՖՖ-ի մասին,
  - տեղադրել խաղացողների և/կամ հատուկ վայրերի (օրինակ. հանդերձարաններ, թունել և այլն) լուսանկարներ,
  - քննարկել պատվիրակի կամ ՀՖՖ-ի՝ որպես կազմակերպություն, աշխատանքը սոցիալական ցանցերի իրենց անձնական էջերում:
- ✓ Պատվիրակի պարտականությունների իրականացման ողջ ընթացքում ակնկալվում է, որ նա կաջակցի ՀՖՖ-ի քաղաքականությանն ու կանոնակարգերին և զերծ կմնա քննադատությունից:
- ✓ Պատվիրակը մշտապես պետք է դրսևորի ընդգծված չեզոք վերաբերմունք երկու թիմերի նկատմամբ՝ անհրաժեշտության պարագայում տրամադրելով նրանց լիակատար աջակցությունը:
- ✓ Պատվիրակը չի կարող անել հայտարարություններ ԶԼՄ-ների ներկայացուցիչների համար՝ առանց ՀՖՖ-ի կողմից տրված հատուկ ցուցումների և հաստատման:
- ✓ Պատվիրակը հատուկ ուշադրություն պետք է դարձնի հագուստի (ՀՖՖ համազգեստի) պատշաճ կրմանը: Այն պետք է լինի մաքուր, կոկիկ՝ հագած ամբողջութամբ (ՀՖՖ համազգեստի պարագայում), և համապատասխան պարագաներով, պատշաճ արդուկած վերնաշապիկով:
- ✓ Պատվիրակներն ու ՀՖՖ այլ պաշտոնյաները թիմերից կարող են ընդունել բացառապես հուշանվերներ, որոնք տրվում են որպես համերաշխության և բարեկամության նշան, առանց որևէ հետագա ակնկալիքի: Տրվող նվերի արժեքը չպետք է գերազանցի 10,000 ՀՀ դրամը: Եթե պատվիրակը կարծում է, որ նվերի արժեքը չափազանց բարձր է կամ նախատեսում է պարտքի զգացում անձի կամ ակումբի հանդեպ, ապա այն պետք է քաղաքավարի մերժվի, իսկ փաստը պետք է զեկուցվի ՄՀՊ բաժնին:
- ✓ Պատվիրակը չի կարող դաշտի տեր թիմից պահանջել խաղի տոմսեր ընտանիքի անդամների կամ ընկերների համար:
- ✓ Խաղին ներկա պատվիրակի ընտանիքի ցանկացած անդամ կամ ընկեր չպետք է ուղեկցի իրեն պաշտոնական պարտականությունների կատարման ընթացքում կամ որևէ կերպ միջամտի դրանց:
- ✓ Պատվիրակին արգելվում է ծխել մարզադաշտում պարտականությունների իրականացման ողջ ընթացքում:
- ✓ Շփումներում պատվիրակը պետք է հույս հայտնի, որ խաղը կանցնի փոխադարձ հարգանքի մթնոլորտում՝ խաղացողների, մրցավարների և երկրպագուների մասնակցությամբ:
- ✓ Խաղի վայրում գտնվելու ընթացքում պատվիրակը ներկայացնում է ՀՖՖ-ն և վերջինիս արժեքները: Այլակարծությունը և համերաշխությունը ՀՖՖ-ի առաջնահերթությունների ցանկում են և ակնկալվում է, որ պատվիրակը կգործի այդ արժեքներին համապատասխան.
  - խուսափել կրոնական կամ քաղաքական թեմաների քննարկումից,
  - սեռական բնույթի և սեքսիստական կատակներն ընդունելի չեն,
  - անհրաժեշտ է դրսևորել հարգանք բոլոր գործընկերների նկատմամբ՝ անկախ իրենց ռասայից, էթնիկ պատկանելությունից, կրոնից, ազգությունից, սեռից և այլն:

ՀԱՎԵԼՎԱԾ 2 - ՀՖՖ ԿՈՂՄԻՑ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

*Սույն հավելվածով սահմանված ցանկը վերաբերում է ՄՀՊ և ՄՌԿ ստորաբաժանումների կողմից կիրառվող կարգապահական պատասխանատվության միջոցներին և չի սահմանափակում ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի կողմից կիրառվող կարգապահական պատասխանատվության միջոցները: Կոմիտեն գործում է ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգով սահմանված կարգով:

Խախտում	Պատասխանատվության միջոց
1. ՀՖՖ կանոնակարգերի խախտում, ՀՖՖ որոշումների և հրահանգների չկատարում, ինչն ազդում է խաղերի կազմակերպման և անցկացման վերահսկողության վրա	
1.1 *Առանց հարգելի պատճառի բացակայություն սեմինարներին և պատվիրակների հանդիպումներին*	նկատողություն
1.2 *Նշանակման ուշ հաստատում.*	
մրցաշրջանի ընթացքում առաջին դեպքը մրցաշրջանի ընթացքում երկրորդ դեպքը մրցաշրջանի ընթացքում երրորդ դեպքը	նկատողություն նախազգուշացում ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում 1 տուրով
1.3 *Նախկինում հաստատված խաղի նշանակման մերժում անհիմն պատճառով՝ խաղի մեկնարկից 5 (հինգ) օրից պակաս ժամանակահատվածում*	
մրցաշրջանի ընթացքում առաջին դեպքը մրցաշրջանի ընթացքում երկրորդ դեպքը	ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում 1 տուրով ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում1 ամսով
1.4 *Խաղին չներկայանալը կամ ուշանալը առանց հարգելի պատճառի*	
Չներկայանալը	ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում 6 ամսով
Ուշացում. մրցաշրջանի ընթացքում առաջին դեպքը մրցաշրջանի ընթացքում երկրորդ դեպքը	 նախազգուշացում ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում1 ամսով
1.5 *Հաշվետվությունը ՀՖՖ-ին ուղարկելու անժամանակ (ավելի քան 1 ժամ) ուշացում՝ առանց հարգելի պատճառի*	
մրցաշրջանի ընթացքում առաջին դեպքը մրցաշրջանի ընթացքում երկրորդ դեպքը մրցաշրջանի ընթացքում երրորդ դեպքը	նկատողություն նախազգուշացում ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում 1 տուրով

1.6 *Հեռացում մարզադաշտից նախքան հանդիսատեսի, խաղացող թիմերի և մրցավարների հեռանալը*	նկատողություն
1.7 *Պատվիրակի չմասնակցելը նախախաղային խորհրդակցությանը՝ անհիմն ուշացման պատճառով*	ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում 1 տուրով
1.8 *Խաղի անցկացում, երբ մարզադաշտը, ՆԳՆ մարմինները և/կամ բժշկական ծառայությունները պատրաստ չեն*	ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում 3 ամսով
1.9 *Հյուրընկալող ակումբի խաղը հեռարձակելու պատրաստվածությունը ստուգելու պարտականությունների չիրականացումը կամ ոչ պատշաճ իրականացումը, հիմնական հեռարձակողի ներկայացուցիչներին հեռարձակումը կազմակերպելու հարցում անհրաժեշտ օգնություն չցուցաբերելը*	
մրցաշրջանի ընթացքում առաջին դեպքը մրցաշրջանի ընթացքում երկրորդ դեպքը մրցաշրջանի ընթացքում երրորդ դեպքը	նկատողություն նախազգուշացում ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում 1 տուրով
1.10 *Մրցավարների և/կամ պատվիրակի նկատմամբ ուղղակի կամ անուղղակի ազդեցության դեպքերի վերաբերյալ տեղեկության թաքցնումը կամ խեղաթյուրումը, որոնք տեղի են ունեցել խաղից առաջ, ընթացքում կամ խաղի ավարտից հետո, այդ թվում՝ մրցավարական անձնակազմի, պատվիրակի և տեսուչի տեղաշարժի ճանապարհին:*	ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում 1 ամսով
1.11 *Պատվիրակի կողմից մրցավարների, պաշտոնատար անձանց կամ այլ շահագրգռված անձանց վրա ազդեցություն գործադրելը կամ դրա փորձը՝ խաղում որոշակի (ֆիքսված) արդյունք ապահովելու նպատակով:*	հեռացում
1.12 *Պատվիրակի կողմից փոխանցվող օպերատիվ տեղեկատվության և պատվիրակի հաշվետվությունում տվյալների խեղաթյուրումը կամ կեղծումը (մրցավարների կամ հենց պատվիրակի վրա ուղղակի կամ անուղղակի ազդեցության հետ չկապված), ինչպես նաև միջադեպերի, վիճաբանությունների, խաղացողների, պաշտոնատար անձանց և հանդիսատեսների խուլիգանական կամ կարգապահական խախտում հանդիսացող վարքագծի փաստերի թաքցնումը:*	ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում 3 ամսով
1.13 *ՀՖՖ-ին փոխանցված ոչ ճշգրիտ կամ սխալ տվյալներ*	
մրցաշրջանի ընթացքում առաջին դեպքը մրցաշրջանի ընթացքում երկրորդ դեպքը մրցաշրջանի ընթացքում երրորդ դեպքը	ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում 1 ամսով ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում 3 ամսով

	ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում 6 ամսով
1.14 *ՀՖՖ-ին փոխանցված թերի տեղեկատվություն*	
մրցաշրջանի ընթացքում առաջին դեպքը մրցաշրջանի ընթացքում երկրորդ դեպքը մրցաշրջանի ընթացքում երրորդ դեպքը	նախազգուշացում ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում 1 տուրով ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում1 ամսով
1.15 *Անհամապատասխանություններ հաշվետվությունում պարունակվող տեղեկատվության և նախկինում ՀՖՖ-ին հեռախոսով կամ էլեկտրոնային փոստով հաղորդված տեղեկատվությունների միջև*	
մրցաշրջանի ընթացքում առաջին դեպքը մրցաշրջանի ընթացքում երկրորդ դեպքը	նախազգուշացում ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում 1 տուրով
1.16 *ՀՖՖ-ի հետ չհամաձայնեցված հարցազրույց ԶԼՄ-ների հետ՝ խաղից առաջ, ընթացքում և հետո տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ*	
մրցաշրջանի ընթացքում առաջին դեպքը մրցաշրջանի ընթացքում երկրորդ դեպքը	ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում 1 ամսով ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում 3 ամսով
2. Բարոյական և էթիկական չափանիշների խախտում	
2.1 *Խաղերին մեկնելիս վարքագծի ընդհանուր ընդունված կանոնների խախտում, ներառյալ՝ կացարանի և սննդի պայմանների, լրացուցիչ ծառայությունների մատուցման և ուշադրության նշանների վերաբերյալ անօրինական պահանջները, ալկոհոլի կամ թմրանյութերի ազդեցության տակ հայտնվելը և այլն:*	3 ամիս ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկումից մինչև հեռացում
2.2 *Անբարոյական, անպատշաճ վարքագիծ մրցավարների, խաղացողների, պաշտոնյաների և հանդիսատեսի նկատմամբ*	1 ամիս ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկումից մինչև 1 մրցաշրջան
2.3 *Աշխատանքից դուրս հանդերձանք կրելը*	
մրցաշրջանի ընթացքում առաջին դեպքը մրցաշրջանի ընթացքում երկրորդ դեպքը մրցաշրջանի ընթացքում երրորդ դեպքը	նախազգուշացում ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում 1 ամսով ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում 3 ամսով